## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

<<Հայանտառ>> ՊՈԱԿ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման *2025 թվականի դեկտեմբերի 02-ին կնքված N* **ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102** *ծածկագրով պետական գնման* պայմանագրում 2026 թվականի մայիսի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով (ֆինանսական միջոցները նախատեսվել են 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով):

**Փոփոխության նկարագրություն՝** ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ վճարման ժամանակացույցի հաստատում

**Փոփոխության հիմնավորում:** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ, 2025 թ *դեկտեմբերի 02-ին* կնքված N *N* **ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, այն հանգամանքը, որ տվյալ պայմանագրով սահմանված ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Հաստատված համաձայնագրի պատճենը կցվում է:

**Պատվիրատու՝** <<Հայանտառ>> ՊՈԱԿ

## ЗАЯВЛЕНИЕ

Об изменениях, внесенных в заключенный договор

<<Армлес>> ГНО представляет ниже краткую информацию об изменениях, внесенных 02/12/2025 года в контракт о государственных закупках с кодом N HA- GHAPZB-2025/102, заключенный 12/12/2026 года на закупку ядов для своих нужд, а также копию двусторонне согласованного документа, содержащего изменения.

**Причина изменения** № 1. Контракт заключен на основании статьи 15 части 6 Закона РА "О закупках" (финансовые ресурсы предоставлены).

**Описание изменения**. Утверждение графика платежей при условии выделения денежных средств.

**Обоснование изменения**. На основании 18-го приказа, утвержденного постановлением Правительства РА от 4 мая 2017 года № 526-Н, пункта 8.5 договора купли-продажи N HA-GHAPZB-2025/102 подписанный 02/12/2025 года (далее – Соглашение), а также принимая во внимание тот факт, что финансовые средства были запланированы для приобретения товаров, определенных данным контрактом.

Копия утвержденного протокола прилагается.

**Заказчик** <<Армлес>> ГНО

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

### 2025Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-ԻՆ ԿՆՔՎԱԾ N ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ԾԱԾԿԱԳՐՈՎ՝ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան «12» հունվարի 2026թ.

<<ՀԱՅԱՆՏԱՌ>> ՊՈԱԿ-ն ի դեմս տնօրենի ժ/պ Գարեգին Միրզոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հո Մեն 21» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն՝ Մուշեղ Հարությունյանի, երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև **N ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով :

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է - էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայանտառ» ՊՈԱԿ | «Հո Մեն 21» ՍՊԸ |
| ք. Երևան, Ա. Արմենակյան 129 | Երևան-Ղափանցյան փ., 115 Տ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ԱՐԴՇԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900018002270 | ՀՀ 2474704561500000 |
| ՀՎՀՀ 02512343 | ՀՎՀՀ 00245167 |
| ------------------------- Գարեգին Միրզոյան | Մուշեղ Հարությունյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
«02» դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքների* | | | | | | | Մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Քանակը | Մեկ միավորի նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) | հասցեն | Ժամկետը*** |
| Շրջանակներ | 44141200 | Շրջանակները նախատեսված են տնկիների աճեցման համար, որպես տնկարանների սեղաններ: Շրջանակի չափերը՝ 1970x1770մմ: Շրջանակի կողմերը պետք է լինեն 30x30x3մմ չափի մետաղական անկյունով, միացված մասերը պետք է լինեն զոդված և փայլեցված: Շրջանակները պետք է բաժանված լինեն 3 հավասար մասերի երկարությամբ (30x20x3 մմ քառանկյուն խողովակ) և 5 հավասար մասերի լայնությամբ (50x25x3 մմ կրկնակի անկյունով (T-աձև) տավր կամ 25x25x3 կրկնակի անկյունակ) մետաղական կոնտեյներների հեշտ տեղադրման համար: Սեղանի համար որպես ոտքեր պետք է տեղադրվի քառանկյուն 30x20x3 մմ խողովակ ըստ նկարի (10 հատ 300 մմ): Խողովակների ներքևի մասում պետք է լինեն 40x40x3 մմ զոդված տակդիրներ՝ հողային մակերեսով տարածքներում ավելի հեշտ տեղադրման համար: Զոդումից հետո բոլոր հատվող մասերը պետք է հղկվեն, որպեսզի չլինեն կոշտ հատվածներ: Շրջանակները պետք է ներկված լինեն երկշերտ հակակոռոզիոն ներկով (գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ): Պետք է պատրաստվի փորձնական փաթեթ (3 շրջանակ), որը պետք է փորձարկվի կոնտեյներների օգտագործմամբ: Փորձարկման արդյունքում շրջանակների վերջնական չափերը կարող են փոփոխվել +/- 30մմ-ով: Բոլոր մասերը պետք է լինեն նոր: Բոլոր պարամետրերի մասով թույլատրելի շեղում 1 %: Ապրանքը պետք է լինեն նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 365 օր: | հատ | 350 | 39,600 | 13,860,000 | Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ ք. Հրազդան, Ջրառատ 2 | համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | |  | | | | | |
| Շրջանակներ | 44141200 | Շրջանակները նախատեսված են տնկիների աճեցման համար, որպես տնկարանների սեղաններ, հատվող բոլոր մասերը պետք է լինեն զոդված և հղկված: Շրջանակի չափերը՝ 2000x1800մմ: Շրջանակի կողմերը պետք է լինեն 30x30x3մմ չափի մետաղական անկյունով , միացված մասերը պետք է լինեն զոդված և փայլեցված: Շրջանակները պետք է բաժանված լինեն 2 հավասար մասերի երկարությամբ /30x20x3 մմ քառանկյուն խողովակ/ և 6 հավասար մասերի լայնությամբ /50x25x3 մմ կրկնակի անկյունով (T-աձև) տավր կամ 25x25x3 կրկնակի անկյունակ/ մետաղական կոնտեյներների հեշտ տեղադրման համար: Սեղանի համար որպես ոտքեր (9 հատ 300 մմ) պետք է տեղադրվի 30x20x3 մմ քառանկյուն խողովակ ըստ նկարի: Խողովակների ներքևի մասում պետք է լինեն 40x40x3 մմ զոդված տակդիրներ՝ հողային մակերեսով տարածքներում ավելի հեշտ տեղադրման համար Զոդումից հետո բոլոր հատվող մասերը պետք է հղկվեն, որպեսզի չլինեն կոշտ հատվածներ: | հատ | 115 | 39,600 | 4,554,000 | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Շրջանակները պետք է ներկված լինեն երկշերտ հակակոռոզիոն ներկով (գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ): Պետք է պատրաստվի փորձնական փաթեթ (3 շրջանակ), որը պետք է փորձարկվի կոնտեյներների օգտագործմամբ: Փորձարկման արդյունքում շրջանակների վերջնական չափերը կարող են փոփոխվել +/- 30մմ-ով: Բոլոր պարամետերի մասով թույլատելի շեղում 1 %: Ապրանքը պետք ՝ է լինի նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 365 օր:   | | | | | | |

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի ...աշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ...տրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

...Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:

**ԳՆՈՐԴ**

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018502270
ՀՎՀՀ 02512343
Գ. Միրզոյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հո Մեն 21» ՍՊԸ
Երևան-Ղափանցյան փ., 115 Տ
ԱՐԴՇԻՆ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 2474704561500000
ՀՎՀՀ 00245167
Մուշեղ Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ